№ 130 Յուլիսի 16 (28) 1881 Յուլիսի 16 (28) № 130

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ոտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

## „ՄՇԱԿ“

ԼՐԱԳՐԻՆ ԿԱՐԵԼԻ Է ԳՐՎԵԼ

ԿԷՍ ՏԱՐՈՎ

Այսինքն յուլիսի 1-ից ներկայ 1881 թւի, մինչև յունվարի 1-ը 1882 թւի։

Բաժանորդութեան գինը 6 ռուբլ է։ Գրվելու համար պէտք է ուղղակի դիմել խմբագրութեանը հետևեալ հասցէով. *Тифлисъ, редакція „Мшакъ“*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ «Московскій Телеграфъ» լրագրի յօդուած։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ «Порядокъ» լրագրի թղթակցութիւն։ Նամակ Թիւրքիայից։ — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ս. Պետերբուրգի Նահանգի ուսուցիչների ժողովի առիթով։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### „МОСКОВСКІЙ ТЕЛЕГРАФЪ“ ԼՐԱԳՐԻ ՅՕԳՈՒԱԾ

—

Մոսկվայում հրատարակվող „Московскій Телеграфъ“ լրագիրը օգուտ քաղելով „Մշակի“ առաջնորդող յօդուածից Կովկասեան համալսարանի մասին, հետևեալ դատողութիւններ է անում իր առաջնորդող յօդուածի մէջ մեր յօդուածի առիթով։

Հայոց „Մշակ“ լրագիրը ջերմ ցանկութիւն է յայտնում Թիֆլիսում համալսարան հիմնելու մասին և համարում է ներկայ րոպէն ամենայարմարը այդ խնդիրը յարուցանելու համար։ Մատնացոյց անելով այն բանի վրա որ ի տէր Հանգուցեալ Թագաւոր-Ազատողի յիշատակին և Նրա անունով դիտաւորութիւն կայ հիմնել Թիֆլիսում մանուկների մի որբանոց, որի համար և հաւաքվում են նուիրատուութիւններ, լրագիրը նկատում է որ բարեգործութիւնը Կովկասեան ազգաբնակութեան մէջ ահագին ընդարձակութիւն կը ստանար, եթէ որբանոցի փոխանակ վճռված լինէր բանալ մի համալսարան։ Մանուկների որբանոցը, որքան էլ անհրաժեշտ լինէր, կունենայ տեղական նշանակութիւն միայն Թիֆլիսի համար, այն ինչ համալսարանը անհրաժեշտ է ամբողջ Կովկասի և Անդրկովկասի համար։ Այդ բաւական չէ. „Մշակ“ լրագրի կարծիքով Կովկասեան համալսարանը կը գրաւէր լսողներին մինչև անգամ Թիւրքիայից և Պարսկաստանից, ուրեմն կունենար կրթիչ ներգործութիւն Ռուսաստանին հարևան պետութիւնների վրա, բայց մանաւանդ այդ երկիրների հայոց երիտասարդութեան վրա։ Այդ հանգամանքը աչքի առաջն ունենալով, անհրաժեշտ կը լինէր այն ձևով կազմակերպել համալսարանի դասաւանութիւնը, որ գոնէ դասախօսութիւններից մի քանիսը կարդացվէին հայերէն լեզուով։

Ինչ որ վերաբերում է ռուսահայերին, Կովկասի և Անդրկովկասի բնակիչներին, շարունակում է Մոսկվայի Թերթը, ունենալով մեզ հետ մի ընդհանուր հայրենիք, նրանք, անտարակոյս, մեզ պէս իրաւունք ունեն ցանկանալ իրանց զաւակների զարգացումը և կրթութիւնը, ցանկանալ, առհասարակ մտաւոր և բարոյական մակերևոյթի բարձրանալը, առանց որի անհնարելի է կատարեալ բարեկեցութիւն և տընտեսական զարգացում նրանց բնակած երկրի, որ այդքան հարուստ է բնութեան պարգևներով։ Որ այդ ցանկութիւնը ճշմարիտ գոյութիւն ունի կովկասեան բնակիչների մէջ,—դրա համար մենք ունենք բազմաթիւ ապացոյցներ. դրան վկայ է հայ պատանիների այն նշանաւոր թիւը, որ ներկայ ժամանակին կրթվում է ռուս համալսարաններում, յաղթելով շատ արգելքների։ Ուղարկել զաւակներին աւարտել իրանց ուսումը հապար վերստ հեռաւորութեամբ, մի բոլորովին տարբեր շրջան, ենթարկելով նրանց ոչ թէ միայն հասարակական, բայց և կլիմայական անսովոր պայմաններին,—դա, անկասկած, հերոսութիւն է, որին կատարելը ամեն մարդ չի վստահի։ Բայց այնու ամենայնիւ շատերը այդ անում են։

Հայոց հարցը մեզ մօտ, շարունակում է „Моск. Телегр.“ ունի նմանութեան մի քանի գծեր հրէական հարցի հետ։ Հայերը, նոյնպէս, մասամբ, ճնշված ցեղ են, թէև աւելի փոքր չափով, քան թէ հրէական ցեղ։ Եւ ահա, ինչի, մարանչելով ամեն տեսակ ճնշման դէմ, բայց մանաւանդ ցեղական ճնշման դէմ, որի հետևանքները կը բերում է ամբողջ ազգութիւնը, մենք առանձին համակրութեամբ ենք վերաբերվում ինքնաճանաչութեան ամեն նշոյլին այդ տեսակ ճնշված շրջանի մէջ, ամեն ձգտմանը դէպի լոյս, ամեն յայտնութեանը մարդկային իրաւունքների և ցանկութիւնների։ Դարձեալ մի անգամ կրկնում ենք մեր շատ անգամ յայտնած միտքը, վերջացնում է ռուս թերթը. եթէ շրջանը մութ է,—անցկացրէք նրա մէջ լոյսի ճառագայթը։ Մեր հայերը, ինչպէս և մեր հրէաները միակերպ պահանջ են զգում մտաւոր զարգացման, իսկ նրանց այդ տեսակ պահանջմանը բաւականութիւն տալու համար, անհրաժեշտ է ամենալայն զարգացումն կրթողական միջոցների հաւասարութեան իրաւունքների սկզբունքի վրա հիմնված։

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Շնորհակալութեամբ ստացանք մեր յայտնի հայագէտ պ. Մ. Էմինից նրա նոր աշխատանքը «Армянскія надписи въ Карсѣ, Ани и въ окрестностяхъ послѣдняго» переводъ Н. О. Эмина. (Հայոց արձանագրութիւններ Կարսում, Անիի մէջ և այդ վերջինի շրջակայքում)։ Գիրքը տպված է Մոսկվայում, ներկայ 1881 թւին։ Ամբողջ աշխատանքը բաղկացած է միայն հայոց արձանագրութիւններից և նրանց թարգմանութիւններից ռուսերէն լեզուով։

—

Մեզ պատմում են որ Ներսիսեան ուսումնարանի տեսուչ Արշակ Նահապետեան վերադարձաւ Էջմիածնից։ Նրան հրաւիրել են տեսուչ Գէորգեան ճեմարանի, տարեկան 5,000 ռուբլ ռոճիկով և ամենայն բան պատրաստ։ Դրան կասեն. «յօնքը չինելու տեղ, աչքն էլ հանել»։

—

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՆԱՀԱՆԳԻ ԳԻՒՂԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

—

Երեկոյեան 6 ժամից մինչև 8 ժամը մոգական լապտերով (волшебный фонарь) ցոյց տուին ռուսաց պատմութիւնից վերցրած մի քանի նկարներ։ Նկարները ցոյց էին տալիս ու մի և նոյն ժամանակ կարդում ռուսաց պատմութիւնից Պետրոս Մեծի մասին։ Ցետոյ եղան մի քանի ֆիզիկական փորձեր։ Ինչ նպատակ ունէին այդ ընթերցանութիւնը ու փորձերը, մենք այդ չը գիտենք. երևի օրինակ ցոյց տալու համար ժողովրդական (գիւղական) ուսուցիչներին, թէ ինչպէս պիտի օգտվել այն բոլոր գործիքներից, որոնք գտնվում են շարժական թանգարանում։ Եթէ այդպէս է, մենք կարող ենք ասել, որ ըրանք չը կարողացան բաւականութիւն տալ իրանց նշանակութեանը—այնքան անաջող եղան այդ փորձերը. այդ էլ բացատրվում է նրանով, որ նախապատրաստութեան համար որոշած ժամանակամիջոցը շատ սակաւ էր։

Յունվարի 3-ին կարդացվեցաւ երկու բէֆերատներ, մէկը «Շարժական դպրոցների մասին Ռուսաստանում», իսկ միւսը «Շարժական թանգարանի մասին»։ Առաջնում յայտնեցին թէ շարժական դպրոցների կառուցման միտքը վերցրած է արևմտեան Եւրոպայից, ուր մի քանի պետութեանց մէջ կան այժմ այդպիսի դպրոցներ։ Շարժական դպրոցների հիմնարկութեան կարևորութիւնը Ռուսաստանի սէջ զգացվել է նախ՝ այն պատճառով, որ ռուսաց գիւղերը գտնվում են մէկ մէկուց հեռաւոր տարածութեան վրա և մշտական դպրոցները դժուարացնում են աշակերտաց միշտ ու կանոնաւոր կերպով յաճախել դասերին. երկրորդ, մշտական դպրոցների պահպանելը համեմատաբար մեծ ծախսեր են նստում գիւղացուց։ Իսկ շարժական դպրոցները, Բէֆերենտի կարծիքով, համեմատաբար քիչ ծախսեր են պահանջում, որովհետև նրանց չինութեան համար կարող են մասնակցել շատ գիւղեր. բացի դրանից, շարժական դպրոցում ուսուցչի վարձատրութիւնը մասամբ կարող է թեթևանալ։ Այդ ամենը Բէֆերենտը ապացուցեց ստատիստիկայից, լրագրներից և ամսագրներից քաղած թուանշաններով։ Շարժական դպրոցների նպատակն է քիչ դումարով շուտով տարածել գրագիտութիւնը գիւղացուց մէջ։

Ներկայումս դժուար է մի վերջնական կազմակերպութիւն տալ շարժական դպրոցներին, իսկ ընդհանրապէս, Բէֆերենտի կարծիքով, այն ըսկզբունքները, որոնց վրա պիտի կազմակերպվեն շարժական դպրոցները—դրանք են. 1) շարժական դպրոցը պիտի ժողովրդական (գիւղական) դպրոցի մի մասը կազմի, այնպէս որ աշակերտները վերջացնելով իրանց ուսումը շարժական դպրոցում—եթէ նրանց կողմից ցանկութիւն յայտնվի—կարողանան մտնել մշտական դպրոցներ. 2) շարժական դպրոցը պիտի ունենայ մի ամբողջ և ամփոփ կուրս. շարժական դպրոցում պարապմունքները պիտի ընթանան շատ խիստ կերպով, օրական 6 ժամ, երեք ամսուայ ընթացքում, միայն մի տեղում։ Շարժական դպրոցի հիմնարկութեան նպատակի համեմատ դասաւանութիւնն էլ պիտի ընթանայ համակենտրոնական ձևով։

Երեք ամիս չարունակաբար պարապելով այդ տեսակ դպրոցում. Բէֆերենտը կարևոր է համարում անցնել կրօնից այնպիսի յօդուածներ, որոնք նպաստում են ժողովրդի միջից մեոտիապաշտութիւնները առնելուն և այնպիսի յօդուածներ, որոնք բացատրում են ու հասկացնում քրիստոնէական կրօնի սկզբունքները. ռուսաց լեզուից աշխատել, որ աշակերտները կարողանան կարդալ յօդուածը ու նրա բովանդակութիւնը պատմել. թուաբանութիւնից հասցնել այն կէտին, որ աշակերտները կարողանան համրել 1-ից մինչև 100-ը ու կատարել թուաբանական գործողութիւններ, տալ նոյնպէս հասկացողութիւն պարզ կոտորակների մասին ($1/2$, $1/4$ և $1/8$)։ Այդ ամենը Բէֆերենտի կարծիքով կարելի է անցնել երեք ամսուայ ընթացքում, օրական 6 ժամ պարապելով։ Այնու ամենայնիւ նա տէնց ինքը յայտնեց, թէ իր առաջարկած պրոգրամման կատարելապէս չէ մշակած, աւելի մանրամասն և աւելի մշակած նա խոստացաւ ներկայացնել միւս ժողովին. իսկ նրա առաջարկած պրոգրամման կարող է տալ միջոց գիւղական ուսուցիչներին խորհել այդ հարցի վրա և յայտնել իրանց նկատողութիւնները միւս ժողովում։ Ցետոյ Բէֆերենտը կանգ առաւ այն հարցի վրա, թէ շարժական դպրոցների համար ուսուցիչներ որտեղից պիտի վերցնենք։ Ռուսաստանի մի քանի նահանգներում կան արդէն շարժական դպրոցներ (подвижныя школы) ու դրանց մէջ ուսուցիչները լինում են կամ պաշտօնից հեռացրած գինուորներ, կամ գրագէտ գիւղացիներ, կամ գիւղական դպրոցում աւարտած տղայք։ Բայց այդ տեսակ ուսուցիչներ մեզ ցանկալի չեն, առաջինները այդ այն պատճառով, որ նոքա սովորեցնում են հին մեոտոդով ու չեն կարող հաղորդել աշակերտներին օգտաւէտ գիտութիւններ, երկրորդները, թէև սովորեցնում են նոր մեոտոդով, բայց դրանք քիչ զարգացած լինելով չեն կարող մեր ցանկացած օգուտները տալ։ Բէֆերենտների կարծիքով շարժական դպրոցների համար կարելի է ընտրել քաղաքային դպրոցներում (городское училище) աւարտած աշակերտներից, թէ որ նոքա մի երեք ամիս էլ պատրաստվէին իրանց նոր մանկավարժական գործունէութեան համար։

Այդ բէֆերատի առիթով կարելի է ասել, որ շարժական դպրոցների կազմակերպութիւնը շատ զանազան է ու նրանց մի քանիսների տեսակները վերցրած չեն արևմտեան Եւրոպայից, այլ նրանք իրանց սկզբնաւորութիւնը ստացել են գիւղական շրջանի մէջ բոլորովին ինքնուրոյն կերպով, ըստ որում աղքատութիւնն է ստիպել ու ստիպում է գիւղացուց շատ քիչ դումար մրսխել իրանց կեանքի կարիքների համար։ Իսկ ինչ վերաբերում է գործի էութեանը, չէ կարելի չափաւոր, որ Բէֆերենտը ինքը լինելով քաղաքային դպրոցի ուսուցիչ ու շատ լաւ էլ հասկանալով թէ՝ ինչքան դժուար է մի քանի բաժանմանց հետ մի սենեակում պարապելը—կարելի է համարում բարձել շարժական դպրոցների ուսուցչաց վրա այդպիսի մի ծանր աշխատանք, ոչ միայն 6—7 ամիս չարունակ—ինչպէս այդ լինում է առհասարակ գիւղական դպրոցներում—այլ և մինչև անգամ ինն ամիս։ Ցայտնի բան է յանձնառուն երբէք չէ կարող իր պարտքը բարեխղճաբար կատարել։ Բայց գրագիտութեան դպրոցների — ինչպէս շարժական, նոյնպէս և ուրիշ տեսակների հիմնարկութիւնը շատ ցանկալի է։ Եթէ գիւղական դպրոցները կը գրաւեն ժողովրդի յարգանքը, այն ժամանակ դրագէտները իրանք ցանկութիւն կը յայտնեն շարունակելու իրանց ուսումը մշտական դպրոցներում։ Շարժական դպրոցների պրոգրամմայի հա-